

2010 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԱՊԱՀՈՎՈՂ
ԾՐԱԳՐԵՐ

*(Ծրագրերը գտնվում են համապատասխան նախարարի անմիջական
հսկողության ներքո, և տարեվերջին ներկայացվելու է ամփոփ
հաշվետվություն)*

1. ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ա. «Մեկ պատուհան, մեկ կանգառ» սկզբունքով ընկերություն հիմնադրելու գործընթացի իրականացումը, որով հնարավորություն կտրվի քաղաքացիներին այցելել միայն մեկ կառույց, իսկ պետական մարմինը փաստաթղթերն ընդունելուց հետո առցանց եղանակով կիրականացնի բոլոր ընթացակարգերը՝ համագործակցելով պետական այլ մարմինների հետ,

բ. նոտարիատի բնագավառում բարեփոխումների իրականացում, մասնավորապես՝

- նոտարների թվի ավելացում առնվազն 5 տոկոսով,

- նոտարների պատասխանատվության միջոցների կիրառման շրջանակների մեծացում,

այդ թվում նաև՝ անզուգուշության հետևանքով թույլ տված իրավախախտումների հետևանքով կնքված գործարքների մասով,

- ստաժորների ուսուցման ու նոտարների կողմից համապատասխան գնահատման համակարգի ներդրում՝ նոտարի անմիջական պատասխանատվությամբ,

- նոտարական գրասենյակներում քաղաքացիների հերթերի վերացում, մատուցվող ծառայությունների որակական բարելավում,

գ. արագացված դատաքննության ընթացակարգերի վերաբերյալ օրենսդրական փաթեթի մշակում և ընդունում:

2. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ա. օտարերկրյա պետությունների հետ տնտեսական համագործակցության համակարգում,

բ. Ճապոնիայում, Քուվեյթում, Իրաքում, Իսպանիայում (Մադրիդ քաղաքում), Չեխիայում (արդեն իսկ գոյություն ունեցող գլխավոր հյուպատոսությունը կվերակազմակերպվի դեսպանության), Բելրոսում, Նիդերլանդներում, Ուզբեկստանում (հարցը դեռևս բանակցային փուլում է), Բրազիլիայում (Սան Պաուլու քաղաքից հյուպատոսարանը կտեղափոխվի) դեսպանությունների կամ հյուպատոսությունների հիմնում, որոնց կառուցման համար պահանջվող միջոցները կներգրավվեն նախարարության սեփական խնայողություններից,

գ. ՀՀ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոցի շենքի վերանորոգման (ներքին հարդարման) աշխատանքի ավարտ՝ նախարարության սեփական խնայողությունների հաշվին, ինչպես նաև դիվանագիտական դպրոցում արտաքին տնտեսական ուղղվածության բաժնի ստեղծում,

դ. 2010 թվականի հոկտեմբեր ամսին ծրագրված հայ-ֆրանսիական համագործակցության հանդիպման կազմակերպում և անցկացում՝ Հայաստանում:

3. ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ա. անապահովության գնահատման կարգի վերանայում, կառավարման մարմինների միջև տեղեկատվական հոսքերի կանոնակարգում, իբրև արդյունք՝ սոցիալական նպաստների հասցեականության մեծացում, այն է՝ նպաստառու ընտանիք/ աղքատ ընտանիք հարաբերակցության բարելավում,

բ. կենսաթոշակային բարեփոխման գործընթացի մեկնարկ,

գ. ժողովրդագրական իրավիճակի գնահատման ցուցանիշների բարելավում,

դ. աշխատանքային օրենսդրության բարելավում, մասնավորապես՝ աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների և լրացումների իրականացում:

4. ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ա. ՀՀ առողջապահության բնագավառում տարածքային համաչափ զարգացման, արդիականացման ծրագրի իրականացում՝ Արմավիր, Ապարան, Գորիս, Արարատ, Իջևան և Գավառ քաղաքներում հիվանդանոցների բացում,

բ. շտապ օգնության ծառայության արդիականացման ծրագրի իրականացում,

գ. դեղերի որակի, դրանց ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովման ծրագրի իրականացում՝ կանխելու համար դեղերի անկանխատեսելի գնաճը,

դ. միջուկային բժշկության զարգացման ծրագրի մեկնարկ,

ե. բուժօգնության և սպասարկման ծառայությունների փոխհատուցման իրատեսական գների սահմանում, համավճարի սկզբունքի կիրառում և վճարովի ծառայությունների կանոնակարգում՝ բուժհաստատությունների ֆինանսական առողջացում, ստվերային

եկամուտների կրճատում, հարկային մուտքերի ավելացում և աշխատավարձերի բարձրացում,

զ. կամավոր ապահովագրության համակարգի զարգացման գործընթացի խրախուսում:

5. ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ա. կառավարման համակարգի արդիականացում, գիտական հիմունքների ներդրում և միջազգային կապերի ընդլայնում, մասնավորապես, միջազգային չափանիշներին համապատասխան ազգային պլատֆորմի ձևավորում,

բ. տեսչական բարեփոխման իրականացում,

գ. ֆինանսական ռեսուրսների առավել հստակ կառավարում,

դ. Հայաստանի Հանրապետության 5 մարզում մոտավորապես 800.0 մլն դրամի հակակարկտային 70-80 կայանի տեղադրում :

6. ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ա. Գերմանիայի վերակառուցման և զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագրով «Հայաստանի Ջավախքի (Մշոցքի) շրջանում պահպանվող տարածքների («Արփի լիճ» ազգային պարկի) ստեղծում» ծրագրի իրականացում,

բ. Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ջրածածկման ենթակա տարածքներում վնասակար ազդեցության կանխարգելման միջոցառումների իրականացում՝ ներառյալ ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ջրի տակ մնացող շուրջ 600 հեկտար անտառածածկ տարածքների ծառաթփային բույսերի մաքրումը և հեռացումը,

գ. Արարատյան դաշտավայրի ստորերկրյա ջրային ռեսուրսների ծավալի ճշգրտման համար անհրաժեշտ ջրաերկրաբանական ուսումնասիրության անցկացում,

դ. Կիտտոյի արձանագրության մաքուր զարգացման մեխանիզմով (ՄԶՄ) ծրագրերի իրականացում:

7. ՀՀ ԳՅՈՒՂՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ա. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանում շաքարի գործարանի շահագործում և հանրապետությունում շաքարի ճակնդեղի մշակության վերականգնում,

բ. Հայաստանի Հանրապետությունում ոչխարաբուծության զարգացման ծրագիր,

գ. հանքային պարարտանյութերի իրացման գնի սուբսիդավորման ծրագիր,

դ. սերմնաբուծության զարգացման ծրագրի իրականացում,

ե. օրգանական գյուղատնտեսության զարգացման ծրագրի մշակում,

զ. տավարաբուծության զարգացման ծրագրի մշակում,

է. խաղողի մթերման նախապատրաստման և պայմանագրային մթերման համակարգի ներդրում,

ը. կենտրոնական լաբորատորիայի կարգավիճակի հստակեցում, հավատարմագրում և կարողությունների հզորացում:

8. ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ա. կորպորատիվ կառավարման կողմնաբան ընդունում և ներդրում (պետական մարմիններում պարտադիր),

բ. գիտակրթական լաբորատորիաների հիմնում՝ արդյունաբերություն, կրթություն և գիտություն կապը ուժեղացնելու համար.

- Գյումրիում՝ ԳՏՏԿ-ում և Երևանի ճարտարագիտական համալսարանում National Instruments ընկերության հետ համատեղ ինժեներական կրթական և գիտահետազոտական լաբորատորիայի հիմնման մեկնարկ. վարկային ծրագրի ներկայացում օպերատիվ շտաբին,
- Հայ - հնդկական, Մայքրոսոֆթի և Աթգոյի հետազոտությունների և մշակումների կենտրոնների՝ խոշոր համակարգչային լաբորատորիաների բացում Երևանի պետական և ճարտարագիտական համալսարաններում:

գ. «Համակարգիչ բոլորի համար» բիզնես ձեռնարկի հրապարակում և ծրագրի ամբողջական ներդրում. 15 հազար համակարգչի տրամադրում, ուսուցիչներին համակարգիչներով ապահովելու ծրագրի մեկնարկ:

դ. «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում ազատ տնտեսական գոտու ստեղծման ներդրումային ծրագիրը մեկնարկելու նպատակով պարտավորությունների ստանձման վերաբերյալ համաձայնագրի ստորագրում,

ե. Թեթև արդյունաբերության ոլորտի խթանում, մասնավորապես՝ Լոռու մարզում «ՎԿՍ Արմենիա» ընկերության կողմից հագուստի կարի ֆաբրիկայի առաջին բաժանմունքի բացում:

զ. Երևանի ֆիզիկայի ինստիտուտի վերակառուցում՝ ազգային գիտական լաբորատորիա ձևավորելու նպատակով,

է. օտարերկրյա ներդրողի ներգրավմամբ հանքային ջրի արտադրության և հյուրանոցաշինության ներդրումային ծրագրերի մեկնարկ:

9. ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ա. ընդերքի մասին նոր օրենսգրքի և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի ընդունում և միջազգային չափանիշներին համապատասխան անկախ լաբորատորիայի ստեղծում,

բ. «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի համակցված շոգեգազային ցիկլով նոր էներգաբլոկի շահագործում և դրա արդյունքում էլեկտրաէներգիայի սակագնի պահպանում,

գ. Համաշխարհային բանկի կողմից 35.0 մլն ԱՄՆ դոլարով ֆինանսավորվող Հրազդան-Շինուհայր 220 կվտ լարման օդային գծի կառուցման ծրագրի իրականացման մեկնարկ,

դ. Իրանի Իսլամական Հանրապետության հետ համատեղ Մեդրի ՀԷԿ-ի (2010 թվականին՝ մինչև 30 մլն ԱՄՆ դոլարի չափով) կառուցման աշխատանքի մեկնարկ,

ե. Մեծամորի ատոմակայանում նոր էներգաբլոկի կառուցման նախապատրաստական աշխատանքի ավարտ, ներդրող կազմակերպությունների ներգրավում, համապատասխան պայմանագրերի կնքում և հնարավոր պատվերների տեղադրում,

զ. Իրանի Իսլամական Հանրապետության հետ համատեղ նավթամթերքատար խողովակաշարի (մոտավորապես 250 մլն ԱՄՆ դոլարի չափով) կառուցման շինարարության մեկնարկ,

է. «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի համակցված շոգեգազային ցիկլով 2-րդ էներգաբլոկի կառուցման վերաբերյալ ճապոնական կառավարության հետ համապատասխան բանակցության սկիզբ:

10. ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ա. 2010 թվականի ընթացքում ավագ դպրոցներին դասագրքերով ապահովում,

բ. բուհական կրթության բարեփոխում,

- գ. հանրակրթական դպրոցների տնօրենների հավաստագրման գործընթաց,
- դ. բուհերում պետական պատվերի նոր ֆինանսական համակարգի ներդրում,
- ե. բուհերի լիցենզավորման կանոնների խստացում ու կրթության միջազգային որակի վերահսկողության նոր չափանիշների սահմանում:

11. ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- ա. արտերկրում գտնվող հայկական ծագում ունեցող պատմամշակութային հուշարձանների փաստագրում,
- բ. ժամանակակից արվեստի ոլորտում դեբյուտային և նորարարական ծրագրերի խթանում,
- գ. 2010 թվականին նշվելիք մի շարք հոբելյանների կազմակերպում,
- դ. պետական թանգարաններում պահվող մշակութային արժեքների վերագրանցման գործընթացի ավարտ, դրանց շրջանառության ակտիվացում, մշակութային արժեքների հանրահռչակում,
- ե. թանգարաններում բաց դռների օրերի կազմակերպում և անցկացում:

12. ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- ա. սփյուռքահայերի ներուժի հայտնաբերում
 - արևմտահայերենի ուսուցման վիճակը սփյուռքում,
 - հայ ինքնության որակների պահպանումը խառն ամուսնություններում,
 - շախմատի ակադեմիայի հետ համատեղ համահայկական օլիմպիադայի կազմակերպում,
 - հայ գիտնականների համաժողովի կազմակերպում,
 - Հայաստանի բուհերի սփյուռքահայ շրջանավարտների հավաք,

բ. հայրենադարձության հայեցակարգի և «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի մշակում,

գ. «Արի տուն» ծրագրի շարունակում և համապատասխան հայեցակարգի մշակում.

դ. գիտական հետազոտությունների պետական պատվերի տրամադրման գործընթացի շարունակում` ԵՊՀ-ի, «Նորավանք» ԳԿՀ-ի և ՀՀ ԳԱԱ-ի հետ,

ե. հուշարձանների պատկերագրքի տպագրում և մանրակերտների ստեղծում,

զ. Ազգային խորհրդի ձևավորման հետ կապված աշխատանքների կատարում,

է. «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնի կազմակերպում և անցկացում` ամբողջ տարվա ընթացքում,

ը. տարբեր բնագավառներում ներուժի հայտնաբերման ծրագրի իրականացում:

13. ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ա. զանգվածային սպորտի զարգացում, ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում մրցույթների անցկացում,

բ. մանկապատանեկան սպորտի զարգացում, մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման հետ կապված աշխատանքների կազմակերպում,

գ. զանգվածային սպորտի և մանկապատանեկան սպորտի զարգացման նպատակով հանրապետության բոլոր ուսումնական հաստատություններում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի մոնիթորինգի անցկացում,

դ. «Երիտասարդ ընտանիքին` մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի իրականացում,

ե. ՀՀ տարածքային կառավարման նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ հանրապետության բոլոր մարզերի ուսումնական հաստա-

տություններում սովորողների տարեկան 2 անգամ պարտադիր բժշկական վերահսկողության ապահովում,

զ. նոր սպորտային համալիրների կառուցում Երևանում և ՀՀ մարզերում:

14. ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ա. տարածքային համաչափ զարգացման ապահովում, գնահատման մեթոդաբանության մշակում և հաստատում,

բ. համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքման վարչարարության բարելավում և կատարելագործում, առկա ռեզերվի բացահայտում, տրանսպորտային միջոցների (ձյունագնացներ, արագագնացներ) պարտադիր գրանցման և հարկման սկզբունքի օրենսդրորեն ամրագրում,

գ. հողային ռեսուրսների արդյունավետ կառավարում, հողերի խոշորացում, 4 տեսակի (աղակալած, չօգտագործվող, սեփականաշնորհված ու հրաժարված) հողերի արդյունավետ օգտագործման խնդրի լուծում,

դ. Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի նոր հրամանագրի նախագծի մշակում:

15. ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ա. Մարմարիկի ջրամբարի կառուցման աշխատանքի ավարտ,

բ. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի հրատապ վերականգնման վարկային ծրագրով նախատեսված Արմավիրի և Թայինի մայր ջրանցքներում վերականգնման աշխատանքների առնվազն 50 տոկոսի հանձնում,

գ. վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացման արդյունքում 500 կմ ջրագծի կառուցում,

դ. խմելու ջրի մատակարարման տևողության ավելացում,

ե. ՀՀ-ում խմելու ջրի կառավարման մոդելի քննարկման և բարելավման ուղղությամբ առաջարկների ներկայացում:

16. ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ա. Հայկական երկաթուղու գույքի կոնցեսիոն պայմանագրով նախատեսված կոնցեսիոնների պարտավորությունների (ներառյալ ներդրումները), ինչպես նաև «Հայփոստ» ՓԲԸ-ն հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության իրականացում,

բ. հեռուստառադիոհեռարձակման թվայնացման ծրագրի տեխնիկական ապահովում,

գ. անշարժ գույքի գրանցման իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների կատարում և պետական նշանակության ճանապարհների՝ պետության սեփականության իրավունքի գրանցման ապահովում, ինչպես նաև ճանապարհների օտարման գոտիներում անօրինական կառույցների առկայությունը և կառուցումը բացառելու նպատակով տեսչական հսկողության իրականացում,

դ. տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործընթացի բարելավում,

ե. ճանապարհաշինարարական աշխատանքների, մասնավորապես, Հյուսիս-հարավ ծրագրի իրականացում,

զ. Հյուսիս-հարավ (Հայաստան-Իրան) երկաթգծի կառուցման ծրագրի իրականացման ընթացքի ապահովում:

17. ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ա. Կոտայքի մարզի Գողթ գյուղական համայնքի Գառնի-Գեղարդ ավտոմայրուղուն հարող տարածքում ագրոտուրիստական-հյուրատնային կենտրոնի, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքային համայնքի կենտրոնի Պասկեիչի կամրջի հարակից տարածքում ռեկրեացիոն գոտու կազմակերպման և Տաթևում զբոսաշրջային կենտրոնների ստեղծմանը նպաստակաուղղված ներդրումային ծրագրերի իրականացում,

բ. ՀՀ բնակավայրերում անհատական բնակելի տների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կիրառում,

գ. անհատական սակավահարկ և միջին հարկայնության բնակելի տների և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմայրուղիներին հարող տարածքներում հասարակական սպասարկման օբյեկտների վերաբերյալ կատալոգի հրատարակում,

դ. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ՀՀ քաղաքաշինության նախարարության և ՀՀ մարզպետարանների պատվիրատվությամբ 6,185.5 մլն. դրամի սահմաններում 170 օբյեկտի կառուցման և հիմնանորոգման աշխատանքների իրականացում,

ե. աղետի գոտու բնակավայրերում «Գլենդել Հիլզ» ՓԲԸ կողմից իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի իրականացում, 1932 բնակարանի շահագործման հանձնում,

զ. քաղաքաշինական ստանդարտների կիրառելիության ապահովում՝ նախագծային աշխատանքից մինչև վերահսկողության իրականացումը,

է. միջազգային փորձի ուսումնասիրում և եվրոպական չափանիշների հիման վրա քաղաքաշինական նորմերի կիրառելիության ամբողջական հայեցակարգի և համապատասխան միջոցառումների ծրագրի մշակում:

18. ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ա. պետական ներքին ֆինանսական հսկողության ռազմավարությունից բխող ներքին աուդիտի և գնումների օրենսդրական դաշտի կարգավորում,

բ. ՄԺԾԾ մշակում,

դ. մեկ անձից կատարվող գնումների համակարգի կանոնակարգում, էլեկտրոնային մրցույթների համակարգի ներդրում և համապատասխան օրենսդրության բարեփոխում,

ե. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի ընդունում և համակարգի ձևավորում,

զ. ծրագրային բյուջետավորման բարեփոխման գործընթացում ներգրավված կառավարման մարմինների շրջանակի ընդլայնում,

է. արտաքին աուդիտի համակարգի կայացում,

ը. արտաբյուջետային հաշիվների հսկողական համակարգի ներդրում և բյուջետավորման գործընթացի վերահսկողություն ՕԻԳ-երի նկատմամբ՝ գանձապետական միասնական համակարգով,

թ. վարչական ռեգիստրների վրա խարսխված ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օժանդակությամբ ֆիսկալ ոլորտում կամերալ ստուգումների անցման համակարգի մշակում և կիրառում,

ժ. ներգրավված ռուսական վարկային միջոցների ընթացիկ սպասարկում, հասուն կաշվառման ապահովում, վարկի մայր գումարի ուղղում տնտեսության զարգացմանը:

19. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ա. հարկային և մաքսային ոլորտներում ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրման մեկնարկ,

բ. էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման գործընթացի շարունակում, որը կհանգեցնի հարկային մարմինների հետ տնտեսավարող սուբյեկտների շփումների նվազմանը,

զ. մաքսային ոլորտում Կանաչ ուղու ամբողջական կիրառման համակարգի ներդրում,
դ. ԱԶ-ների համար հաշվետվական համակարգի վերացում և արտոնագրային վճարի համակարգի ներդրում:

20. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ա. ՀՀ գույքահարկի և հողի հարկի 2011-2013 թվականների հարկման բազաների ձևավորման նպատակով անշարժ գույքի կադաստրային գնահատման աշխատանքի իրականացում,

բ. Նորվեգական կառավարության հետ վարած բանակցությունների արդյունքում տրամադրվող դրամաշնորհով անշարժ գույքի արդյունավետ գրանցման, քարտեզագրման և տեղեկատվության տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրում,

գ. պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների ստեղծման և օդալուսանկարահանման աշխատանքի շարունակականության ապահովում,

դ. քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ընթացակարգերի պարզեցում, որակի բարձրացում, ժամկետի կրճատում և միջազգային չափանիշներին համապատասխանեցում,

ե. կոմիտեի 52 տարածքային (առանձնացված) ստորաբաժանումների շենքային պայմանների բարելավման գործընթացի շարունակման ապահովում, այդ թվում՝ նոր տարածքների ձեռքբերում՝ նաև Երևան քաղաքում:

21. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ

ա. 6 ընկերության բաժնետոմսերի մասնավորեցում՝ ֆոնդային բորսայի միջոցով,

բ. պետական գույքի տվյալների բազաների ճշգրտմանն ու թարմացմանն ուղղված միջոցառումների իրականացում, որոնց արդյունքում պետք է ստեղծվեն իրավական հիմքեր պետական սեփականություն հանդիսացող ճանապարհների, կամուրջների, ջրատարների, ջրամբարների, ինչպես նաև ոչ նյութական ակտիվների հաշվառման և համապատասխան գրանցումներ իրականացնելու համար,

գ. ՀՀ կառավարության որոշումներով 912 համայնքներին իրենց վարչական սահմաններում գտնվող` պետական սեփականություն հանդիսացող հողամասերի, այդ թվում` պետական սեփականություն հանդիսացող` շենք, շինություններով զբաղեցված, ինչպես նաև դրանց սպասարկման և օգտագործման համար հատկացված հողամասերի, անհատույց սեփականության իրավունքով համայնքներին փոխանցելու հետ կապված խնդիրները կանոնակարգելու նպատակով համապատասխան առաջարկությունների ներկայացում,

դ. պետության կողմից պետական բաժնեմաս ունեցող 439 ընկերությունների կառավարման լիազոր ներկայացուցիչների ինստիտուտի ստեղծմանն ու կայացմանն ուղղված աշխատանքի կանոնակարգում, կորպորատիվ կառավարման կոդեքսի ներդրում,

ե. վարձակալված պետական գույքից մոտավորապես 180.0 մլն դրամի չափով վարձակալական վճարի հավաքում և ՀՀ պետական բյուջե մուտքագրում,

զ. ըստ պայմանագրերի` 1.4 մլրդ դրամի չափով ներդրումների և 1150 աշխատատեղի ստեղծման գործընթացի վերահսկողության ապահովում,

է. հանրակացարաններում բնակվող բնակիչներին իրենց զբաղեցրած տարածքների անհատույց սեփականաշնորհում,

ը. պետական գույքի կառավարման համակարգում:

22. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸԼԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՑԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ա. 76 մլն ԱՄՆ դոլարի չափով ներդրման միջոցով նոր ուղևորափոխադրման համալիրի կառուցման աշխատանքների իրականացում, որը կլիթանի ՀՆԱ-ի աճը,

բ. Եվրոպական ավիացիոն գործակալության կողմից ընդունված օտարալեզու փաստաթղթերի կիրառում և համապատասխան օրենսդրական ակտերի ընդունում,

գ. Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում փոքր ավիացիայի օդանավերի համար թռիչքների և վայրէջքների սխեմաների մշակում և ներդրում,

դ. ուղևորափոխադրման գործընթացում մատուցվող ծառայությունների նկատմամբ պարբերական վերահսկողության իրականացում՝ հասարակության ներգրավմամբ: